

պատակներուն հետ, մինչեւ որ Վերսայլի արքունիքէն նոր հրաման դայ» :38) :

ԵՐԿՐՈՐԳՎ ԱՒԵՐԱԹՈՒՂԹ

«Հայ ազգին հերձման մասին յիշատակագիր մը Յիսուսեաններէ պատրաստուած» :

«Այս նեղութեանց գլխաւոր պատճառը՝ այդ ազգին սովորական խոշոր սխալներն ու չարաչար գործադրութիւններն են» :

«Այս չարաչար գործադրութեանց գլխաւորը՝ որոշ զոհողութիւններն են, զոր տարին երկու անգամ կը մատուցանեն, այսինքն՝ կենդանական զոհերը (մատաղները), ըստ հին օրէնքին, եւ քանի մը ուրիշ սխալներ, որոնց համար մեղաւոր են (հայերը), ինչպէս սրբութեանց մատուցումը եւ մասնաւորաբար ծայրայեղ օծումը, որ կը մատուցանեն կղերականներէն զատ ոչ ոքի, այն ալ անոնց մահէն վերջ միայն : Իրենց սխալները կարելի է մեծ մասամբ իջեցնել Եւտիքեանց եւ Դիոսկորեանց հերձուածին : Շատ սովորական է հայոց մէջ գտնել անոնք, որ այդ հերետիկոսներուն օրինակին հետեւելով՝ Յիսուս Քրիստոսի մէկ բնութիւնը կը թոյլատրեն : Անոնք կը խոստովանին, որ Յիսուս Քրիստոս կատարեալ Աստուած է եւ կատարեալ մարդ, թէ ան ծնած է, մեռած, եւ յարուցեալ մեր փրկութեան համար : Եւ, սակայն, առանց նեղուելու մեր հաւատքի իրերուն բացատրութեանց մասին, ընդհակառակը կ'ընդունին, որ մարդկային բնութիւնը, իւրացուած ըլլալով սրբազանին մէջ մարմնաւորման պարագային համեմատ, Յիսուս Քրիստոսի մէջ կը մնայ բնութիւն : Իրենց դժբախտութիւնը յառաջ կուգայ Քաղկեդոնի ժողովին չհաւատալէն, ուր 600 հայրապետներ, որոնք ներկայ էին, այնքան լաւ կերպով զատեցին Եւտիքէսի եւ Նեստորի հերձուածէն, եւ ատոր վրայ հաստատեցին այն ընտիր կանոնները, որոնք ցարդ բոլոր քրիստոնեայ ազգերէն հա-

ւասարապէս յարգուած են, բացի այս հայ աստուածարաններէն : Կը խօսիմ այս տղէտ ժողովուրդին յամառութեան վրայ, որ այնքա՛ն մեծ է, եւ որ որոշեալ օրեր կը հայհոյեն ու կը բանադրեն Քաղկեդոնի ժողովը, հայրերը, որոնք հոն էին, եւ նոյնիսկ Լեւոն Պապը, որուն գիտնական թուղթերը ծափահարութեամբ ընդունուեցան հոն եւ այդ առթիւ իբր հաւատքի կանոն նկատուեցան : Ընդհանրապէս կը խորհուի, որ ասիկա իրենց ազգին սխալները կը յաւերժացնէ : Անոնք Փրկչին ծննդեան տօնը 12 օր վերջ կը տօնակատարեն եւ, ձեւափոխելով յունաց նշանաւոր Trisagion-ը, փոխանակ ըսելու «Սուրբ, Ահեղ, Անմահ Աստուած, գթա՛ մեր վրայ», կ'ըսեն. — «Սուրբ, Ահեղ, Անմահ Աստուած, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ» : Իբր թէ սրբութեան եւ ոչ թէ օրհնեալ մարդկութեան մէջ Աստուածորդին մեզի համար խաչուեցաւ : Կը խորհուի նաեւ, որ նոյն պատճառաւ, անոնք ջուր չեն խառնէր բաժակին, որովհետեւ այդ հեղուկներու խառնուրդը կը ներկայացնէ Յիսուս Քրիստոսի երկու բնութեանց միացումը, որ անոնք չեն ուզեր ընդունիլ : Անոնք այնքան յառաջ գացած են, որ նոյնիսկ Դիոսկորոսի համար սուրբ շարականներ կը կարդան, եւ կը յիշեն Գրիգոր Տաթեւացին, Յովհաննէս Օմնեցին, եւ ուրիշ հաւատարիմ պահողները այս սխալներուն, իբր թէ անոնք սուրբեր ըլլային : Ասիկա ամենազարմանալին է, որովհետեւ հայ եկեղեցին կը ճանչնայ իբր սուրբ նաեւ Ներսէսները, Գրիգոր (of Marech) Եզըր, Գրիգոր Կլայեցի եւ ուրիշներ, որոնք ընդունեցին Քաղկեդոնի ժողովը, եւ անցան Պապին իշխանութեան տակ : Հայոց տարեգրութիւնը ինը ազգային ժողովներէն կը յիշէ միայն երկուքը՝ սխալներուն կողմնակցող, Դուինի (Therin?), որ 120 տարի վերջ (Ghame?) ժողովին մէջ դատապարտուեցաւ, եւ երկրորդ Մանազկերտի ժողովը, որ դատապարտուեցաւ չորս հետնազոյն նոյն ազգին ժողովնե-